ԱԿՆԵՐ

Սանահինն ու Ակները ներկայումս մտնում են Ալավերդի քաղաքի վարչական կազմի մեջ:

Ըստ ավանդության, լեզգիները պաշարում են Կայան բերդը, բայց այն գրավել չեն կարողանում: Ամրոցում պատսպարվածներին ընկճելու նպատակով որոնում են բերդ տանող ջրակունքը՝ ամենուր հարցնելով՝ *ո՞ր ա ակ:* Մատնությամբ տեղն իմանալով՝ ջրազրկում են բերդը և նվաճում այն: Իսկ գյուղի անունը մնում է Որնակ (*ո՞ր ա ակ*), ո՞ր է ակունքը (Արամ Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 182): Բայց գյուղանունը գալիս է ավելի վաղ ժամանակներից՝ առատ ջրերի ակունք լինելու շնորհիվ:

Ակունքում կա քանիցս վերանորոգված սագաշեն եկեղեցի, միջնադարյան գերեզմանոց ու խաչքարեր:

228. ԽԱՉՔԱՐ. եկեղեցու արևմտյան մուտքից աջ, դրսից, 1 տող.

ՍԲ ԵՐԱՆՈՍ:

Ծանոթ. Այս խաչքարը եկեղեցու պատի մեջ է դրվել վերանորոգումների ընթացքում՝ տեղափոխվելով շրջապատի գերեզմանոցից: Գրերը խոշոր են, խորանի կամարի կողքերին (ԺԳդ.):

229. ԽԱՉՔԱՐ. գյուղից հարավ, «Ակներասարի» «Ոտնխաչ» մատուռի գերեզմանոցում, մոմածխից սևացած, քիվին՝ 1, թիկունքին՝ 5, կողին՝ 3 տող.

ԵՍԱՂՋԱՆՍԿԼ ԵՍ՝ ԱՂԱՋԱՆՍ, ԿԱ[ՆԳՆԵՑԻ ՍԲ ԽԱՉՍ:]
...ԵՍ՝ ՏՐ ՅՈՀ[ԱՆԷՍ,]
ԵԿԻ ՈՒ ՏԵՍԱ Մ
...ՈՐ ՆԵՋ ԷԻՆ ՈՒ
... ՏԻՆ ԱՒՐ
...ՈՒՆԹ ԹԱ....
Ի Թ[ՎԻՆ]
ՉԼ
Ե(1286):

Ծանոթ. Տեր Հովհաննեսը Հաղբատավանքի առաջնորդն էր:

230. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ. Ակներասարի գերեզմանոցում, թիկունքին, 3 տող.

Ի ԹՎ[ԻՆ] ՉԻ (1271) [Ե]Ա ՄԽԻԹԱՐ Ք
ԱՀԱՆԱ ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՉՍ....
.....

Ծանոթ. Խաչքարի բեկորը գտնվել է հողի միջից: Լուսանկարը մեզ է տրամադրել երևանաբնակ ակներցի Ռուբեն Հակոբյանը, որի համար հայտնում ենք շնորհակալություն (Խմբ.):